ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 24.10.2023թ. կնքված ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/07-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար համազգեստի լրակազմերի ձեռքբերման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվել է N ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/07-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 13 860 000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: 2024թ. օգոստոսի 21-ին Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքվել է N 2 համաձայնագիրը, որով ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2024թ. սեպտեմբերի 23-ը:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Վարչապետի աշխատակազմին ուղղված 03.01.2025թ. գրությամբ Տեսչական մարմինը հայտնել է, որ Ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 19-ին

մատակարարվել է Պայմանագրով նախատեսված ապրանքի թերի խմբաքանակ, սակայն գնումների էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունը և հարկային հաշիվը ներկայացվել է ամբողջ խմբաքանակի համար: Վերոգրյալից ելնելով՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ին գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է բացասական եզրակացություն, ըստ որի Ընկերության կողմից մատակարարված ապրանքը չի մատակարարվել պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարված ապրանքների մասով առկա են եղել անհամապատասխանություններ, լրակազմերի թվաքանակները եղել են ոչ ամբողջական:

Ըստ այդմ, Տեսչական մարմինը 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ /01/3/16833-2024 գրությամբ Ընկերությունից պահանջել է ապրանքը ողջ ծավալով մատակարարել գրությամբ սահմանված ժամկետում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 24-ի աշխատանքային օրվա ավարտը՝ նախազգուշացնելով, որ հակառակ պարագայում Պայմանագիրը միակողմանի կլուծվի, և Ընկերության նկատմամբ կկիրառվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցները:

Սակայն, Ընկերությունը նշված գրությանը չի պատասխանել և գրությամբ սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարել: Ուստի, համապատասխան փաստաթղթային հիմքերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելով՝ Տեսչական մարմինը խնդրել է միակողմանի լուծել կնքված պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերը շարադրված իրավանորմերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ փաստացի չմատակարարելով ապրանքը ողջ ծավալով և սահմանված ժամկետներում, վարչապետի աշխատակազմը միակողմանի հրաժարվել է 24.10.2023թ. Ընկերության հետ կնքված N ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/07-1 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն մասնակիորեն լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Միաժամանակ հայտնում եմ, որ «ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը վարչապետի աշխատակազմը 22.01.2025թ. հրապարակել է գնումների պաշտոնական տեղեկագրում՝ ապահովելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են « ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ